ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 12.02.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/08

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝ (այսուհետ՝ նաև Խորհուրդ) քննելով «Սենդա» ՍՊԸ-ի 13.01.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«Սենդա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Սենդա» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 13.01.2018թ. ներկայացրել է բողոք, որը կազմված է եղել «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 50-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտմամբ:

Խորհուրդը՝ հիմք ընդունելով Օրենքի 50-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջները, վերադարձրել է «Սենդա» ՍՊԸ-ի կողմից 13.01.2018թ. ներկայացրած բողոքը՝ արձանագրված անհամապատասխանությունները երկու աշխատանքային օրվա ընթացքում շտկելու և Խորհուրդ ներկայացնելու համար:

Ընկերությունը 29.01.2018թ. Խորհրդին էր ներկայացրել բողոքի շտկված տարբերակը, որով հայտնել էր հետևյալը.

«2017թ. դեկտեմբերի 28-ին «Սենդա» ՍՊԸ-ի կողմից Armeps համակարգով էլեկտրոնային եղանակով ուղարկվել է համապատասխան փաթեթ՝ ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/62 ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու կապակցությամբ, սակայն ըստ Երևանի

քաղաքապետարանի 09.01.2018թ. կազմված թիվ 2 արձանագրության (արձանագրությունը ստացվել է 11.01.2018թ.) հարցմանը մասնակցած երեք կազմակերպություններից երկուսի, այդ թվում «Սենդա» ՍՊԸ-ի, հայտով ոչ մի փաստաթուղթ կցված չէ: Մեր կարծիքով, պատճառը ունի տեխնիկական բնույթ՝ կապված Armeps համակարգի հետ:

Մինչդեռ, մեզ մոտ պահպանված համակարգչային ֆայլերում երևում են կցված փաստաթղթերը և վերջնական ուղարկված փաթեթը: Վերջինս փաթեթավորվել է և փաթեթավորումը ավարտելու մասին համապատասխան տեղեկատվություն ստանալուց հետո է միայն ուղարկվել: Ընդ որում այդ փաստաթղթերը չկցելու դեպքում, համակարգը հնարավորություն ունի զգուշացնելու, թե որ փաստաթղթերը չեն ներկայացվել:

Բացի այդ, փաթեթը Armeps համակարգով ուղարկելուց հետո, համակարգում հայտնվում է հաղորդագրություն այն մասին, որ բոլոր ներկայացված նյութերը առկա են, պակասող կետեր չկան և ֆիքսվում է ուղարկման օրը, ժամը ու ստացականի հերթական համարը, կարգավիճակը՝ դրական, թ/ս համընկման արդյունքը՝ դրական, ժամանակին ստացումը՝ դրական: Նման հաղորդագրություններից հետո, ինչպե՞ս կարող է հայտը երևալ, իսկ հայտին կից փաստաթղթերը՝ չերևալ: Կնշանակի՝ դա տեխնիկական բնույթի թերություն է, որը հանգեցրել է մեր ընկերության փաստաթղթերի առկա չլինելուն:

Բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները.

«Սենդա» ՍՊԸ-ն արդեն 7-րդ տարին է, ինչ մասնակցում է պետական, ոչ պետական կազմակերպությունների կողմից ինչպես թղթային, այնպես էլ՝ էլեկտրոնային Armeps համակարգով հրավիրված մրցույթներին և բազմիցս անգամ դարձել է հաղթող: Ընկերության համար Armeps համակարգով գնանշման հարցման մրցույթներին մասնակցելը մշտական գործառույթ է, և մրցույթների անցկացմանը մասնակցելու հայտերը, առանց կից փաստաթղթերի փաթեթավորման ներկայացումը անհնար էր, համակարգը ունի զգուշացնելու հատկություն:

Ստացվում է, որ գնանշման հարցման երեք մասնակիցներից երկուսը, որոնք գրասենյակային կահույքի գնանշման հարցման մշտական մասնակիցներից են, նույն սխալն են կատարել: Ամենայն հավանականությամբ, պատճառը Armeps համակարգից է, նախկինում շատ են եղել դեպքեր, երբ այդ համակարգից մրցույթների կառուցվածքի և մրցույթի նախապատրաստման գործիքը բեռնելուց հետո առաջացել են տարբեր տեսակի դժվարություններ. Չափաբաժինների հերթական համարները, կամ անվանումները չեն համապատասխանել հրավերով սահմանված չափաբաժիններին, կամ, 5-7 չափաբաժիններից ավել չափաբաժինների մասնակցելու դեպքում համակարգը պարտադրել

է նորից վերահաստատել համակարգում մնալը-աշխատելը, կամ հայտը իրեն կից փաստաթղթերով տեղադրելիս առաջացել են խնդիրներ Ինտերնետ կապի հետ:

Աշխատանքի ընթացքում առաջնորդվելով համակարգի ընձեռնած՝ մեզ օգնող հնարավորություններից, որոնց մասին նշվել է սույն բողոքի 4-րդ կետում, մեր կողմից կատարվում է փորձ՝ հնարավորինս պատշաճ ձևով ներկայացնել հայտը իրեն կցվող բոլոր փաստաթղթեով:

Մեր կարծիքով, խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ կետի, 2-րդ ենթակետի պահանջը, այն է՝ հայտերի էլեկտրոնային ձևով ստացման էլեկտրոնային սարքերը պետք է երաշխավորեն ստացված տվյալների ամբողջականությունը»:

Ամփոփելով Բողոքով ներկայացված փաստարկները՝ Ընկերությունը պահանջել է չեղյալ համարել 2018թ. հունվարի 9-ին կայացած ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/62 ծածկագրով գնանշման հարցման արդյունքները և անցկացնել նոր հարցում, կամ Ընկերության կողմից ներկայացված փաթեթի հիման վրա վերանայել հարցման արդյունքները:

Խորհրդի նիստերին մասնակցում էին Ընկերության տնօրեն Արմեն Սաֆարյանը և լիազորված ներկայացուցիչ Արկադի Առաքելյանը:

2. **<u>Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>**

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով՝ ստացված բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով, Խորհուրդը 25.01.2017թ. դիմել է Երևանի քաղաքապետարանին (այսուհետ՝ Պատվիրատու)՝ առաջարկելով նույն հոդվածով սահմանված ժամկետում Խորհրդին տրամադրել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճենները և Պատվիրատուի գրավոր դիրքորոշումը, սակայն Բողոքի վերաբերյալ որևէ գրավոր դիրքորոշում քաղաքապետարանի կողմից Խորհրդին չի տրամադրվել:

Խորհրդի նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Մարինա Կարապետյանը:

3. **<u>ԳԲԽ-ԷՍ-2018/08 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>**

Խորհուրդն ուսումնասիրել է «Սենդա» ՍՊԸ-ի կողմից 13.01.2018թ. Խորհրդին ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/62» ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/62» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 09.01.2018թ. ժամը 11:00-ին կայացած հայտերի բացման նիստի N 2 արձանագրությունը, Պատվիրատուի դիրքորոշումը և կարծիքը.

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար գրասենյակային կահույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/62» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Սենդա» ՍՊԸ-ն:

Հանձնաժողովը՝ 09.01.2018թ. ժամը 11:00-ին կայացած հայտերի բացման նիստի N 2 արձանագրության 4-րդ կետով արձանագրել է, որ Ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացված յուրաքանչյուր բացված հայտում պահանջվող փաստաթղթերը առկա են և կազմված են սահմանված պայմաններին համապատասխան, բացառությամբ «Սմարթլայն» և «Սենդա» ՍՊԸ-ների (հայտով ոչ մի փաստթղթուղթ կցված չէ): Գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել վերը նշված մասնակիցների հայտերը:

«Սենդա» ՍՊԸ-ն Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, որ «Սենդա» ՍՊԸ-ի կողմից Armeps համակարգի միջոցով էլեկտրոնային եղանակով ուղարկվել է մրցութային փաթեթ՝ ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/62 ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով, սակայն ըստ Պատվիրատուի 09.01.2018թ. կազմված թիվ 2 արձանագրության՝ հարցմանը մասնակցած երեք կազմակերպություններից երկուսի, այդ թվում «Սենդա» ՍՊԸ-ի, հայտով ոչ մի փաստաթուղթ կցված չէ: Ընկերությունը կարծիք է հայտնել, որ վերը նշված հանգամանքն ունի տեխնիկական բնույթ՝ կապված Armeps համակարգի հետ: Բացի այդ, Ընկերությունը հավելել է, որ հայտը Armeps համակարգով ուղարկելուց հետո, համակարգում հայտնվել է հաղորդագրություն այն մասին, որ բոլոր ներկայացված նյութերը առկա են, ֆիքսվել է ուղարկման օրը, ժամը ու ստացականի հերթական համարը, կարգավիճակը՝ դրական, թվային ստորագրության համընկմնան արդյունքը՝ դրական, ժամանակին ստացումը՝ դրական: Ընկերությունը հայտնել է նաև, որ առանց կից փաստաթղթերի փաթեթավորման ներկայացումը անհնար էր, քանի որ համակարգն ունի համապատասխան զգուշացնելու հատկություն:

Մատնանշելով այն հանգամանքը, որ գնանշման հարցման երեք մասնակիցներից երկուսի հայտերում արձանագրվել է նույն սխալը, այն է՝ ոչ մի փաստթղթուղթ կցված չէ,

Ընկերությունը եզրակացրել է, որ ստեղծված իրավիճակի պատճառը Armeps համակարգից է, և վկայակոչել է նախկինում տեղի ունեցած բազմաթիվ դեպքեր, երբ համակարգից մրցույթների կառուցվածքի և մրցույթի նախապատրաստման գործիքը բեռնելուց հետո առաջացել են տարբեր տեսակի դժվարություններ:

Բողոքի քննության նպատակով 29.01.2018թ. տեղի ունեցած նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց, որ բացի «Սմարթլայն» և «Սենդա» ՍՊԸ-ներից, Ընթացակարգին հայտ են ներկայացրել այլ մասնակիցներ, որոնց կողմից ներկայացված հայտերը սահմանված կարգով ներբեռնվել են համակարգում, և բոլոր կցված փաստաթղթերն առկա են եղել, ինչը վկայում է այն մասին, որ համակարգը գործել է անխափան:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝ 8-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Էլեկտրոնային ձևով հաղորդակցության համար օգտագործվելիք միջոցները պետք է լինեն ոչ խտրական, ընդհանուր առմամբ մատչելի լինեն հնարավոր ցանկացած մասնակցի և փոխգործակցող տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների ընդհանուր օգտագործման միջոցների հետ:

ՀՀ կառավարության 06.04.2017թ. N 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի 6-րդ կետի համաձայն՝ Էլեկտրոնային գնումների համակարգն ունի հայտ ներկայացրած մասնակիցների տվյալները կոդավորելու և մինչև հայտերի բացման պահն այդ տվյալների ապակոդավորման անհնարինությունն ապահովելու հնարավորություն:

Բողոքի քննության ընթացքում Խորհուրդը պահանջեց Ընկերությունից ներկայացնել հայտը սահմանված պահանջներին համապատասխան ներբեռնելու մասին ապացույց:

Ընկերությունը Խորհրդին հայտնեց, որ «Սենդա» ՍՊԸ-ն համապատասխան հարցում կներկայացնի ՀՀ ֆինանսների նախարարություն և վերջինիսկողմից տրված եզրակացությունը կտրամադրի Խորհրդին:

Ի պատասխան «Սենդա» ՍՊԸ-ի հարցմանը, ՀՀ ֆինանսների նախարարությունը 12.02.2017թ. գրությամբ տրամադրել է եզրակացություն, որով, մասնավորապես, հայտնել է, որ Ընկերության կողմից նշված խնդրի լուծման համար ՀՀ ֆինանսների նախարարությունը դիմել է համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպությանը: Կազմակերպությունն ուսումնասիրելով խնդիրը՝ տեղեկացրել է, որ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/62» ծածկագրով ընթացակարգի մասնակից «Սենդա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաթեթը ապակոդավորվել և առկա է, ուղղակի այն դատարկ է (չափը՝ 4.1 կբ): Քանի որ

հայտի փաթեթը կազմվում, փաթեթավորվում և վերբեռնվում է մասնակցի կողմից իր իսկ համակարգչով, նշանակում է, այն մասնակցի կողմից պատշաճ կերպով չի կազմվել և վերբեռնվել համակարգ:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ «Սենդա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաթեթը պատշաճ կերպով չի ներբեռնվել համակարգ, ինչը և հիմք է հանդիսացել Հանձնաժողովի կողմից Ընկերության հայտը մերժելու համար:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովը՝ «Սենդա» ՍՊԸ-ի հայտը մերժելով, գործել է իրավաչափ:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Սենդա» ՍՊԸ-ի կողմից 13.01.2018թ. Խորհրդին ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**